ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/136

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարան
Մասնակից՝ «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱՀԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնանշման հարցում, դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային տպիչների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 15.08.2019թ. թիվ 26/26-1/13572-2019 գրությամբ «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի 12.08.2019թ. թիվ 691 գրության հիման վրա, 15.08.2019թ. «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի 15.08.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 27.08.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 27.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 11.09.2019թ.-ին:

2. **<u>ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>**

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, 12.08.2019թ.-ին թիվ 691 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ կից ներկայացնելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

3. **<u>«Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

Բողոքներ քննող անձը 16.08.2019թ. գրությամբ դիմել է «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.08.2019թ. թիվ 26/26-1/13572-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք՝ չներկայանալով նաև նիստերին:

4. <u>ՍՑ-LO-2019/136 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ի միջև 12.06.2019թ.-ին կնքվել է թիվ «ԱՀԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրով նախատեսվել է, որ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի Հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 1-ին չափաբաժնի մասով սահմանված ASUS X 540/541 մոդելի 15 հատ դյուրակիր համակարգիչներ:

Պայմանագիրն ուժի մեջ է մտել 12.06.2019թ.-ին և Պայմանագրով մատակարարման ժամկետ է սահմանվել՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 21-րդ օրացույցային օրվանից սկսած 10 օրացույցային օրվա ընթացքում:

Պայմանագրով սահմանված ժամկետում՝ Գնորդին մատակարարվել է 1-ին չափաբաժնի մասով նախատեսված 15 հատ դյուրակիր համակարգիչները:

Սակայն Ախուրյանի համայնքապետարանի գնումների պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից տրված զեկուցագրի համաձայն՝ համակարգիչները չեն համապատասխանել պայմանագրի հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագրերին:

Պատվիրատուն հրաժարվել է հանձնված մատակարարված ապրանքից և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.4 ենթակետի «գ» պարբերությամբ՝ պահանջել է վաճառողից ողջամիտ ժամկետներում տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքը անհատույց փոխարինել պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով, ինչը վաճառողի կողմից չի կատարվել:

Պատվիրատուն հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» պարբերության պահանջները՝ միակողմանի մասնակի լուծել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի և «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ի միջև 2019 թվականի հունիսի 12-ին կնքված թիվ «ԱՀԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնման պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 12.08.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի և «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ի միջև 12.06.2019թ.-ին կնքված թիվ «ԱՀԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով պայմանագիրը Պատվիրատուի կողմից 09.08.2019թ.-ից միակողմանի մասնակի լուծել է հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» պարբերության պահանջները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.08.2019թ. թիվ 26/26-1/13572-2019 գրությամբ «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի

բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն' պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն' պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած

պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ «Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.4 կետի «գ» պարբերության համաձայն՝ գնորդը իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխանող ապրանքով, եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» պարբերության համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել գնորդի համար ընդունելի ժամկետում:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի և «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ի միջև 12.06.2019թ.-ին կնքված թիվ «ԱՀԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով ապրանքների մատակարարման պետական գնման պայմանագրով նախատեսվել է, որ Վաճառողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի Հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված 1-ին չափաբաժնի մասով սահմանված ASUS X 540/541 մոդելի 15 հատ դյուրակիր համակարգիչներ:

Պայմանագրով սահմանված ժամկետում՝ Գնորդին մատակարարվել է 1-ին չափաբաժնի մասով նախատեսված 15 հատ դյուրակիր համակարգիչները: Սակայն Ախուրյանի համայնքապետարանի գնումների պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից տրված զեկուցագրի համաձայն՝ համակարգիչները չեն համապատասխանել պայմանագրի հավելված 1-ով նախատեսված տեխնիկական բնութագրերին:

Պատվիրատուն հրաժարվել է հանձնված մատակարարված ապրանքից և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.4 ենթակետի «գ» պարբերությամբ՝ պահանջել է վաճառողից ողջամիտ ժամկետներում տեխնիկական բնութագրին չհամապատասխանող

ապրանքը անհատույց փոխարինել պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով, ինչը վաճառողի կողմից չի կատարվել:

Պատվիրատուն հիմք ընդունելով՝ Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» պարբերության պահանջները՝ միակողմանի մասնակի լուծել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի և «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ի միջև 2019 թվականի հունիսի 12-ին կնքված թիվ «ԱՀԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով գնման պայմանագիրը:

www.gnumner.am համացանցային կայքում 12.08.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի և «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ի միջև 12.06.2019թ.-ին կնքված թիվ «ԱՀԳՀԱՊՁԲ-19/11» ծածկագրով պայմանագիրը Պատվիրատուի կողմից 09.08.2019թ.-ից միակողմանի մասնակի լուծել է հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «ա» պարբերության պահանջները:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ն ողջամիտ ժամկետներում տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանքն անհատույց չփոխարինելով պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին համապատասխանող ապրանքով, դրսևորել է անգործություն, որի արդյունքում Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանիորեն լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում 12.08.2019թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ն, խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 15.08.2019թ. թիվ 26/26-1/13572-2019 գրությամբ «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Արտյոմ Սահակյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**